

ՀՀ Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյանի ուղերձը սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվա առիթով

Սիրելի՛ աշակերտներ և ուսանողներ, ուսուցիչներ ու դասախոսներ, շնորհավորում եմ ձեզ սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվա կապակցությամբ:

Հազարամյակների պատմություն ունեցող մեր ժողովուրդը միշտ աչքի լույսի պես է պահել իր գոյության երկու գլխավոր կռվանները՝ գիրն ու հավատքը: Այսօր էլ գիտելիքն ու կրթությունը ժամանակի մարտահրավերներին դիմակայելու և համաշխարհային զարգացումներին համընթաց քայլելու ամենակարևոր նախապայմաններից են:

Հայ մարդը, անկախ պատմականորեն ձևավորված իրավիճակից, գիտելիքը միշտ համարել է մեր երկրի ամենաարժեքավոր հարստություններից, ուստի, յուրաքանչյուրիս պարտքն է պահպանել այն, ըստ արժանվույն գնահատել և օգտագործել ի շահ հայրենիքի:

Համոզված եմ, որ գրի ու դպրության հանդեպ ունեցած սերն ու նվիրումը, արդիական գիտելիքներով զինված կիրթ և բանիմաց սերունդը երկրի առաջընթացի գրավականն են:

Տոնական այս օրը հատկապես ուզում եմ շնորհավորել առաջին դասարանցիներին: Ցանկանում եմ, որ ուսումնառության տարիները նրանց համար լինեն հարուստ ու բովանդակալից, իսկ գիտելիք ստանալու խանդավառությունն ու բարձր տրամադրությունը՝ մշտական ուղեկից:

Սիրելի՞ դպրոցականներ, լիահույս եմ, որ ձեր ձեռքբերումներով ու հաջողություններով դուք ավելի հաստատուն կդարձնեք մեր վաղվա օրը, ավելի տեսանելի՝ մեր երազների երկիրը:

Մեկ անգամ ևս շնորհավորելով բոլորիդ ուսումնական տարվա մեկնարկի առիթով, մաղթում եմ քաջառողջություն, անսպառ եռանդ, հաջողություններ ուսման մեջ և կյանքում:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Վ. Հակոբյան

30 օգոստոս 2013թ.